

Ս Ի Ր Տ Ս Գ Ա Ր Ո Ւ Ն Է

Բակըս գարուն է .—
Ափ մը կանաչ, —
Կըտուց մը կանչ, —
Երգ մը սիրտըս կ'արիւնէ . . .

Ու ծաղիկներ, —
Հովով խօսուն
Ու գրգասուն, —
Սանդուխն ի վար, պատն ի վեր . . .

Արիշէն վար
Կը կախէ ոքքն
Եր ծիլերն յորդ,
Նուռն՝ ողկոյզներ կարմրավառ . . .

Սիրտըս գարուն է .—
Սէր ու ծիծագ,
Հարսնիք ու տաղ .—
Գինին շրբներս կ'արիւնէ . . .

1830 Դամաս

Ի Ղ Զ Ի Ց Ա Ճ Ա Խ Ա Ն Ք

Երբեմն, յիմար կ'ունենամ իդան յանկարծ քեզի հանդիպե-
լու
Ճամբու դարձէին կամ դրրանը առջեւ բակիս, երբ բանամ
զայն,
Քեզ բարեւե՛լ առանց դողի կամ զարմանքի եւ մեղմաձայն,
Երբր թէ բնաւ վիրաւորիչ բան չենք ըսած իրարու:

Ու կ'ուզեմ որ զիս բարեւենս կամաց, շիկնուու ու կէս ժրպ-
տուն,
Փայլեցնելով շընատամիդ ոսկին՝ նըման կայծոռիկի:
Յետոյ ըսես սովորական բաներ՝ ըսուած յանախակի,
Երբր թէ հին՝ հինին նըման՝ բարեկամներ ենք ես ու դուն:

Աչքերդ ուրիշ աչքերու մէջ փընտըռելէն յոգնեցայ ես.
Զանձրոյքին՝ սիրտս, եւ ճանձրոյքէն մահուան, այսիան
չէր վարժըւած,
Եւ իդան այսիան բաղցրօրէն զիս չէր օրօրած զրկին այս-
պէս . . .

...Երբեմն, յանախ կը փափառիմ հանդիպիլ ես քեզի յան-
կարծ,
Երբ միս մինակ, սա՛ անծանօթ փողոցները կը քափառին,
Միրտս երազով ու ձանձրոյթով, կարօւ՝ աչքի մը մրտե-
րիմ...:

Հայէպ, 1930

ԱՆՈՒՆԴ Կ'ԱՅՐԵ ...

Երբբունիներըս կ'այրէ անունդ ու չեմ կրնար արտասանել,
Ըսել անունը բարձրաձայն՝ ամայութեան մէջ ես ինծի.
Օրերուս մէջ սա չըքաւոր եւ անկրքակ յիշատակի.
Ես կը վախճա՞մ վայրկեաններէն՝ անցնող հաս հաս, ին-
կող թել թել:

Ես կը վախճա՞մ ինքըզինքէս, վատութենէն նոյն խսկ սրբ-
տիս,
Որոնք կրնան սրբել տանիլ ի՛նչ որ երէկ եղաւ համբոյք
Շուրբիս վրայ քու շրբներէդ, ի՛նչ որ երէկ իմ ձեռքէս
քոյք,
Եղաւ զգուանք քու ձեռքերուդ, մէջֆիդ վրայ, — զիրգ ո-
վասիս:

Մոռցայ գոյնը աչուրներուդ կայծոռավառ զիշերներուն.
Մոռցայ համը մրմունցներուդ, լուռ լացերուդ՝ ականցիս
մօտ,
Աւ կշռոյթը նըուազանոյշ՝ ծովափ ծաղկող հովիկներուն...

Այժմ օտարի պէս կը նայիմ ըստուերներուն մեր քով քովի
Մեր խենքութեանց, հսկումներուն՝ կէս զիշերէն մինչ ա-
ռաւօտ ...

Օր մ'անունդ ալ եթէ մոռնամ, ի՛նչ կը մնայ քեզմէ ինծի...

ՎԱՐԱՒԺՆԱԿ

Դամասկոս, 16-1-933